գիշերուան ժամանակ կտրել տուաւ բոլոր ան գեղեցիկ ծառերը, որուն վրայ առտուանց քնակիչք զարմացած մնացին։ Ոչ ոք կարծեր որ այն շինուելիք թատրը շատ աւելի իրենց զուարճութեանն ու փառացը պատճառ պիտի ըլլար, քան թէ ծառազարդ ճեմելիք մը։ Այց շինուելիքը համար անքաւ ծախք գնաց ու քնաւ բանի մը ինայմունք չեղաւ, որով Ճարտարապետը իր գեղեցիկ ուրուագիծը կատարելապէս 'ի գլուխ հանեց, ու հասարակաց դիմայն ընծայեց այնպիսի շէնք մը՝ որ թէ՛ ամբողջութեանը և թէ առանձին առանձին մասանցը մէջ զարմանալի կը տեսնուի։

Այսոր տափակ կամարով սիւնակալ դաւիթը կորնթեան սիւնաշարքով մը զարդարուած է, որուն տեսքը վսեմ է, թէպէտ և երևելի բացառութեամբ մը, յատակը շրջակայ երկրին հետ հաւասար է, որով վեր ելլելու սանդուղիս չէ ունեցած, որ միշտ մէկ փառաւոր շէնքի մը ամբողջութեան՝ աչքի աղէկ տպաւորութիւն կ'ընէ։ Դաւիթը զարմանալի է ու դորացի Ճարտարապետութեան կարգի գեղեցիկ սիւներովը շինած, և մանաւանդ ներսի մեծ սանդուխը՝ որուն ձևը յանդուգն մտաց ծնունդ մը կը ցուցընէ Ճարտարութեանը հաւասար։ Ընդարձակ և բարեշէն դահլիճը կրնայ երեք հազար անձինք ներս առնուլ, և ներքին զարդարանքը արտաքին փառաւորութիւնը համեմատ է։

Այս մեծագործ թատրանին մէջ 1780ին սկսան տեսարաններ ձևացուիլ. և առաջին անգամ բացուելուն՝ գաղղիական ամենէն նշանաւոր և անուանի թատրերգութիւններէն մէկը ձևացուցին, որ էր Մասինին Գոնոդիան, որով թատրանին մեծագործութեանն համեմատ ողբերգութիւն մը հանդիսականաց առջին կը հանէին։

ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՄԸ

Տէրմանուկեան Յովհաննէս եպիսկոպոս։

Հետևեալ հետաքրքրական նամակը գրած է տրապիզոնցի Տէրմանուկեան Յովհաննէս եպիսկոպոսը առ Յակոբ կաթուղիկոս իր ճամբորդութեանը մէջ գլխէն անցած կարգէ դուրս դէպքերը պատմելով։ Հընդկաստանէն Էջմիածին դարձած ատեն՝ հոն իր Թուղթը գտնելով կ'առնու դարձեալ ու քովը կը պահէ։ Հիմա այս Թուղթը մեր մատենադարանը կը գտնուի, ուսկից որ առած անփոփոխ կը հրատարակենք։

Աստուածընտիր և Սրբազան Տեառն Յակոբայ վեհապետիդ առքբ գարշապարացն երկրպագութիւն մատուցանեմ հրակեզ սիրով։

Որ և բազմաւ խոնարհութեամբ այժմ՝ զնորալուր բանս՝ սկիզբն արարեալ համառօտաբար պատմեսցուք զամենայն անցսն մեր. թէ որպիսի բազմադիմի վիշտք և նեղութիւնք, և կամ որպիսի մահառիթ վտանգք և սարսռելի պատուհասք և փորձութիւնք, որք եկեալ պաշարեցին զմեզ յամենայն կողմանց և կուտեցան 'ի գլուխս մեր յաղագս ծուլացեալ յանցանացս մերոց, և կամ վերջապէս ոչպէս ազատեալ ելաք նորահրաշ աքանչելեօք և ամենախնամ գթութեամբն Աստուծոյ բարերարին։ Զանգի 'ի Թուականիս Հայոց ՌՄԺԱ (1762), և յունվ. ամսեան 20, ամենայն պատրաստութեամբ 'ի Պասրայ մտաք 'ի նաւն Մալէհ չալապի կոչեցեալ Մուրբին. և յաջողմամբն Աստուծոյ գընացեալ 40 օրն հասաք 'ի Պանտար Մուրաթ առաջին քաղաքն Հնդկաց, 'ի նոյն թուին և ամսոյ 12. և անդ արարաք զմեծահանդէս տօնն սրբոյ զատկին. նաև աւարտեալ կատարեցաք անդ զամենայն գործ նուիրակութեան մերում. և յետ 15 աւուր անցանելոյ սրբոյ զատկին, և ապրիլ ամսոյ 24, 'ի Մուրաթ մտաք 'ի նաւն ուրումն կրակապաշտի, պիղծ անուանն նորին Մէջրէի կոչիւր. որ կամէաք գնալ 'ի Բանկալայ յայնկոյս մեծ ծովուն աշխարհին Հնդկաց 'ի մեծ նաւահանգիստ քաղաքն Կալկաթայ կո-

չեցեալ. և 'ի մէջ անհուն ծովուն 60 օրի Ճանապարհ գնացաք. իսկ 'ի սաստիկ ալէկոծութեանց և 'ի մրրկաց, նաև 'ի հեղմանէ անձրևաց, և 'ի յուժգին քախմանէ ամպոց և կայծականց մոլորեալ տգէտ և յիմար ղեկավարքն ոչք էին մահմետականք, թիւրեալ հեստեցան և ոչ կարացին գտանել զուղիղ Ճանապարհն Պալկաթայ քաղաքին. այլ թիւրեցեալ գնան՝ անցեալ գնացին 300 մղոնի չափ աւելի, և ոչ բնաւ երբէք գիտէին ուր տեղ լինիլն։ Իսկ 'ի հնչմանէ յուժգին հողմոց՝ և 'ի սաստկութենէ մրրկածուփ ալէկոծութեանց, յանկարծակի նաւն զարկաւ 'ի գետին 'ի ներքուստ, և իսկոյն ղեկն խորտակեցաւ, և նաւն ընկողմանեալ նստաւ 'ի վերայ աւազոյ. և համայն շինուածք նաւին խախտեալ թուլացան և տախտակք ոմանք անկան 'ի տեղւոջէ իւրեանց. և ջուր ծովուն լցեալ եղև 'ի մէջ նաւին. և հաւասար եղև նաւն ընդ ծովուն. զի անմարդաբնակ և ամայի ցամաքն երևիր. որ նաւն այնչափ հեռի կայր 'ի ցամաքէն, որքան է 'ի սրբոյ Թոռոյն մինչև 'ի Երևան քաղաքն. և 200 աւելի անձինք կային 'ի մէջ նաւին. 13 անձինք յազգէն Հայոց էաք թէ այր և թէ կին. իսկ այլ մնացեալքն էին մահմետականք, կռապաշտք Հնդիկք և բուն Ֆրանկք Փորթուքէշ կոչեցեալ։ Եւ մինչ այսպիսի վտանգաց դիպեցաւ նաւն, զոր ինչ կայր 'ի մէջ նաւին, թէ ուտելիք և թէ այլ ինչ զատք և բեռինք, համայնքն մրրկածուփ ալիք ծովուն 'ի խորս ծովու ընկղմեցին։ Այնժամակսաք ամենեքեան լալ գոռալ. և Ճիչ բարձեալ հառաչմամբ և ձայնիւ մեծաւ աղաղակել առ Աստուած բարերարն զի անցուցէ զցասումն իւր 'ի մէնք. որ և 'ի նոյն ժամու 2 կանայք յազգէն մերմէ խեղդամահ եղեն. և այլք ոմանք այլազգք 'ի հարկանելոյ սաստիկ ալէկոծութեանց խեղդամահ ընկղմեցան 'ի ծովն. և ս 'ի նմին ժամու մեր սանտուխն ընկղմեցաւ 'ի ծովն, որ սրբալոյս մեռոնն և ամենայն գլքերն 'ի միջի նորին էր. նաև կոնդակքն և ամենայն ինչքն մեր՝ բովանդակքն ընկղմեցան 'ի խորս ծովու. ո՛հ, աւաղ հոգւոյս, զայս ամենայն տեսեալ և մանաւանդ սրբալոյս մեռոնին 'ի ծովն գնալն, յայնժամ իսպառ յոյսն մեր հատաւ և վայ կարդացաք ողորմելի անձանց մերոց։ Իսկ ալիք ծովուն և՛ս քան զևս սաստկանայր. իսկ 10 անձինք և մէկ մարդ յազգէն մերմէ շուտափոյթ մտին 'ի փոքր նաւակն՝ և փախեալ գնացին 'ի ցամաք, և ապրեցուցին զանձինս իւրեանց 'ի հեղձմանէ. բայց զմեզ մոռացան և ոչ երբէք կամեցան փրկել և ազատել։ Եւ այլ մնացեալ բազում մարդիկք 'ի մէջ նաւին, ժողովեցան 'ի միասին, 'ի յառաջագոյնս կապեալ զամենայն գերանսն արձակեալ՝ 'ի մի վայր բերեալ կապեցին զամենեսեան զմիմեանքք հաստ և ստուար պարանաւ. և ապա ինքեանք ղեկավարքն և նաւավարքն որք էին 40 անձինք մահմետականք, նստան 'ի վերայ կապեալ գերանացն, և ալիք ծովուն տարեալ էհան զնոսա 'ի ցամաք. մեք քրիստոնեայքս և՛ս բազում ջանիւք կամեցաք ընդ նոսա գնալ. թէպէտ և բազում աղաչանս և պաղատանս արարաք նոցա, սակայն ոչ թողին անօրէնքն զմեզ գնալ ընդ իւրեանց. զի նոքա բազումք էին և մեք սակաւք. զինչ էաք կարող առնել. այլ յամենայն աւուր 6 մարդ, և կամ 5, կամ 4, և կամ 2 մարդ, իւրաքանչիւր օր գնացին 'ի ցամաք. իսկ մեք ողորմելի անձարքս 17 օր սոված և անսուաղ մնացաք 'ի մէջ նաւին որպէս զվերջին թշուառս, որք էաք 5 հոգիք Հայոց ազգէն. և այլ մնացեալքն՝ 6 մահմետականք, և 4 բուն Ֆրանկք Փորթուքէշ ազգաւ։ Եւ յետ 17 աւուրց, յաւուր վարդավառի բարեկենդանի կիրակին, յինն ժամու կարի խիստ սաստկացաւ ահարկու ալիք ծովուն 'ի հնչմանէ յուժգին հողմոց, և 'ի թընդմանէ ամպոց և կայծականց, և 'ի հեղմանէ առատահոս անձրևաց. յայնժամ նաւն սկսաւ իսպառ քայքայիլ և խորտակիլ. և 'ի նմին ժամու բաժանեցաւ 'ի բազում մասունս. իսկ մեք սրտատո-

ջոր լայաք աղիողորմ արտասուօք. և կանգնեալ կայաք 'ի վերայ դապուսուն։ Յայնժամ աղաղակեալ յիշեցաք զմայրն ողորմութեան ամէնօրհնեալ սուրբ Աստուածածինն. նաև ջերմն հաւատով յուսացաք առ տէրն մեր Յիսուս Քրիստոս և ապաւինեցաք առ ամենագութ ողորմութիւնն իւր. և 'ի նոյն ժամու իսկոյն այն մեծ դապուսու կըտուրն՝ որոյ վերայ մինչ մեք կանգնեալ էաք, խնամօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ամբողջապէս որոշեալ 'ի տեղւոջէ իւրմէ, և առեալ տարաւ ըզմեզ և եհան 'ի ցամաք 'ի մէջ գիշերին. և մինչ ազատեցաք 'ի ծովէն և ելաք 'ի ցամաք, յայնժամ անկեալ 'ի վերայ երեսաց մերոց՝ երկրպագութիս և փառս մատուցաք ամենասուրբ երրորդութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ բազմաւ գոհութեամբ հանդերձ։ Աւրդ մեք 15 անձինքս ողբ ազատեցաք 'ի ծովէն, 5 հոգիք ողբ Հայոց ազգէն էաք, այս է. նախ ես անարժանս և մեր տէր Յովսէփն. և 2 նորահաս կոյս աղջկունք, ողբ խօջայ Մինասեանց լուսահոգի Գրիգոր աղայի դստերքն էին, և մէկ ևս նօքէր տղայ. իսկ այլքն Ֆռանկք և Թուրք էին։ Այլ զկնի 2 աւուրց վարդավառի երեքշաբաթի շաբաթապասին, 'ի յառաւօտու ծագիլն արեգական, մինչ գնայաք յեզր ծովուն, յայնժամ անձառահրաշ սքանչելեօքն Աստուծոյ՝ յանկարծակի գտաք զսրբալոյս մեռոնն ամբողջ իւր ամանովն, և մուշամպոփն կապեալ և զմռով կնքեալ որպէս որ էր անարատ յառաջագոյն՝ նոյնպէս գտաք. և յայնմ ժամու եղեալ ցնծութիւնն մեր ոչ կարեմ գրով պատմել. քանզի նոյն սանտուխի մէջն՝ 100 գիրք մօտ կայր. թող զայլ ամենայն ինչն. ամենևին մէկ զատ դուրս ոչ եկն, բայց միայն սրբալոյս մեռոնն գտաք. և առեալ զնա մեծաւ ցնծութեամբ և բազմաւ ուրախութեամբ գնացաք։ Եւ ապա 40 օր 'ի Ճանկալն և 'ի ծովեզերն շրջեցաք ասա և անդ, և բազում անգամ որոնեցաք առ 'ի գընալ 'ի շինութիւն. սակայն ոչ եղև հնար և ոչ կարացաք գտանել զՃանապարհ իմն զի գնայաք 'ի շինութիւն. քանզի մի կողմն ծովն էր. և 'ի միւս կողմն հանդէպ ծովուն էր սաստիկ խիտ անտառս ծառոց և ջմջմայ ջուր, նաև գազանաբնակ. և ամենևին ոչ գոյր Ճանապարհ. իսկ 'ի ծովեզերն ըմբռնեալ գնացաք երկու աւուր Ճանապարհ, մէկ փոքր գետ անցաք. և ապա պատահեցաք անդնդախոր գետոյ միոյ որ 'ի ծովն մտեալ խառնիւր. 9 օր մնացաք անդ և ոչ կարացաք անցանել. և 'ի գիշերի միում յերեկոյի մի ժամ գիշերն անցեալ էր. յանկարծ եկին 'ի մէջ մեր երկու կատաղի առիւծ գազանք՝ 4 մարդ յափշտակեալ տարան պատռեցին. և մեք մնացեալքս վայ տալով անձանց մերոց, և փախեաք լալով յետ կոյս և փոքր գետն անցաք յորմէ գնացեալ էաք. և զձեռս միմեանց ըմբռնեալ փախեաք զի մի կորուսանիցեմք զմիմեանս. զի էր սաստիկ մթին գիշեր. և հեռացեալ 'ի գազանաբնակ տեղւոջէն՝ այլ իմն տեղ գնացեալ դադարեցաք. և զկնի 15 աւուրց այս գազանական պատուհասէն իբր զերծեալ միամիտ կայաք. և 'ի մէջ գիշերի դեռևս արթուն էաք, յանկարծ կրկին եկն գաղտագողի նոյն կատաղի չիք առիւծ գազանն՝ մի մարդ ևս յափշտակեալ տարաւ. և անտի ևս սրբատաղող փախեաք 'ի կէս գիշերին երեք ժամ գնացաք, և նստաք դողալով մինչև ցառաւօտ. իսկ 'ի լուսանալ առաւօտուն, գնացաք նոյն տեղն որ սրբալոյս մեռոնն գտեալ էաք. անդ կայ առեալ մնացաք 15 օր. ուր շնորհիւ տեառն այն պիղծ գազանն ոչ եկն. թէպէտ մեք բազում աղ և երկիւղ կրէաք. և 'ի տեղւոջն յայնմիկ մերձ ծովուն՝ 10 ծառ կայր առանձնակի. երեկոյին շուտ ելանէաք 'ի վերայ ծառոցն, մնայաք բոլոր գիշերն մինչև 'ի ծագիլ արևուն. և ապա իջանէաք 'ի ծառոցն. որ կայր հեռի միով ժամաւ 'ի Ճանկալէն. նա ևս 'ի գազանաբնակ տեղւոջէն ևս հեռի էր միոյ աւուր Ճանապարհաւ. վասն զի գազանն այն դարան մտեալ՝ 'ի գիշերի գաղտագողի գայր և յափշտակէր զմեզ.

10219361

սակս որոյ 'ի վերայ ծառոցն անվնաս էաք 'ի գազանաց։ Եւ 'ի տեղւոջն այնմիկ երեք զարմանալի բարերարութիւն արար մեզ Աստուած։ Նախ՝ գերահրաշ սուրբ մեռոնն անդ գտաք։ Երկրորդ, վերջին ապաստան տեղի անդ եղև մեզ. որ անվնաս մնացաք 'ի գազանաց։ Երրորդ՝ և զկնի բազմաց մահառիթ վտանգաց՝ անդ ազատեցաք շնորհիւ և ողորմութեամբն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ 'ի մէջ սոյն 40 աւուրս՝ որ կացաք 'ի Ճանկալն, մեր ուտելիքն այս էր. երբեմն խաչափառ և այլ ժժմունք դժուարաւ գտեալ ուտէաք. երբեմն սակաւ մեռեալ ձէյրան գտանէաք և հում ուտէաք. և երբեմն փշոց պտուղք և խոտ ուտէաք. և այսպիսի դառնութեամբ անցուցաք ըզկեանս մեր մինչ 'ի 40 օր։ Եւ երկու ամիս հաց ոչ եմք կերեալ. և գլուխն մեր առանց սափրելոյ էր. և ամենայն հանդերձք մեր փտեցան 'ի յառատահոս հեղմանէ անձրևաց։ Սակ յաւուր միում մինչ դառն ողորմելի նստեալ էաք. և ես ասացի տէր Յովսէփին թէ, տես եղբայր, զի կերպարանքն մեր այլանդակեալ է 'ի մարդկային տեսութենէ, և դարձեալ եմք իբրև զվայրենի կենդանի, և վերջին թշուառութեամբ մերձ եմք 'ի դուռն մահու. մեք մինչ էաք 'ի մէջ սրբոյ Աթոռոյն՝ այն օրհնեալ ջկուրն տրտնջալով ուտէաք. և բամբասէաք թէ՝ ջկուրի մէջն ծուխ է մտած, և կամ միան սակաւ է և նիհար. ահա իրաւի արժանապէս նոյն պատիժն է զոր կրեմք արդար իրաւամբն Աստուծոյ. զայս ասելով լացաք աղիողորմ արտասուօք։ Եւ արդ՝ 'ի լրանալ 40 աւուր, որ էր Հայոց ՌՄԺԱԹիւն, և յօգոստոսի 16 վերափոխման ամենօրհնեալ սուրբ Աստուածածնին շաբաթապասի ուրբաթի օրն, Պաղրգանջ կոչեցեալ գիւղաքաղաք կայր՝ երկու աւուր Ճանապարհ հեռի էր 'ի ծովէն. յայս յիշեալ գիւղաքաղաքն Անկլիզ պալիօզ կայր նստեալ 200 զօրականօք և այլ մարդկամբք. և քսան զայեղով եկն գետի ջրոփն 'ի ծովեզրն թօփով և թուֆանկով սակս մեր խորտակած նաւի դուրս եկած զատքն և կամ բեռինքն ժողովելոյ. յայնժամ տեսեալ զմեզ գթայաւ. և խնամելով տարաւ զմեզ 'ի նաւակն իւր և բազմեցոյց ընդ ինքեան և կերակրեաց զմեզ հացիւ և այլ ուտելեօք. նաև հանդերձ ևս ետ մեզ. և 6 օր պահեաց զմեզ ընդ իւր, և ապա առաքեաց զմեզ խնամով 'ի Պաղրգանջ կոչեցեալ քաղաքն 'ի յօթևանն իւր ուստի ինքն եկեալ էր. և անդ ևս զմեզ խնամօք ութ օր պահեցին. և մեր ազգէն ոչ կայր անդ. բայց յառաջագոյն մինչ եգիտ զմեզ այս օրհնեալ Անկլիզն, նոյն օրն զասիտով գիր առաքեաց 'ի Կալկաթայ և 'ի Դաքայ քաղաքսն, մեր Հայոց ազգին իմացուցին էր տուեալ վասն զմեզ գտանելոյն. և իսկոյն մեծ Պետրոս աղայի փոքր եղբայրն՝ օրհնեալ Յարսեղ աղայն յայնժամ Դաքայ էր. երեք զայեղ առաքեաց բազում մարդկամբք. հաց և հանդերձ ևս էր առաքեալ իւր սպասաւոր մէկ հայ տղայով. և եկեալ զմեզ տարան 4 օրն 'ի Դաքայ քաղաքն 'ի մէջ մեր քրիստոնեայ ազգին. մէկ ամիս բժիշկքն դեղ արարին մեզ առողջացուցին զի դառնագոյն ցաւօք հիւանդ էաք։ Սակ յորժամ լուան ընդ ամենայն տեղիս ազատիլն մեր, ամենեքեան թէ՛ մեր ազգն և թէ այլ ազգք՝ կարի զարմացան. զի հաւաստեաւ գիտէին որ երկու ամիս անցեալ էր մեր նաւի խորտակիլն, և յառաջին օրն որ նաւն խորտակեցաւ, փոքր նաւակաւ գնացօղ 10 նաւավարքն, և մէկ երիցու տղայ ևս ընդ նոսա զերծեալ՝ և վասն մերոյ ազատութեան ոչ հոգս էր արարեալ ամենևին. այլ շուտափոյթ մեր խեղդամահ լինելոյ բօթն հրատարակեալ էր. նաև խոշնայ Ինաստանց լուսահոգի Գրիգոր աղայի երկու կոյս դստերքն որք ընդ մեզ ազատեցան շնորհօքն Քրիստոսի, նոցա եղբօրն և այլ ազգակցացն ևս բօթն տուեալ էր. վասն այն ոչ կարծէին զմեզ կենդանի և ողջ. այլ յորժամ լուան ազատիլն մեր՝ և մանաւանդ անձառահրաշ սքանչելեօքն

Աստուծոյ սրբալոյս մեռանի գտանիլն, իրաւի մեծ ցնծութիւն և ուրախութիւն եղև ազգիս մերոյ որք բնակեալք են յերկիրս Հնդկաց։ Իրաւի մեծ արար տէր զողորմութիւն իւր առ ազգս մեր Հայոց. զի 'ի յայսմ դառն ժամանակիս, Աստուծոյ ամենաքաղցր գթութեամբն՝ նոր փրկարար աքանչելիք երևեցաւ յայտնապէս 'ի մէջ Հայկազեան ազգիս մերոյ։ Այց զայս ևս յայտ առնեմ յաղագս անպատմելի ցնծութեան և ուրախութեան սրտիս և հոգւոյս. զի աստուածագործ սուրբ մեռանս այս՝ զոր ընդ անարժանիս նուիրեալ առաքեցեր յերկիրս այս, մեծի սրբազանի տէրութեանդ նախկին և անդրանիկ շնորհաբաշխութեան սրբալոյս մեռանօրհնեքի պտուղն էր. որ 'ի ժամ օրհնութեան և կարգ կատարելոյ սրբաբաշնագործ իւղոյն, անարժանս ևս նոյնժամն ներկայացեալ ականատես էաք 'ի սուրբ Աթոռդ ցանկալի 'ի մէջ մեծահանդէս բազմութեանցն։ Զ ասն որոյ բիւր գոհութիւն և փառք Աստուծոյ բարերարին, որ այսպիսի հրաշապատում աքանչելեօք սուրբ մեռանին ազատեցաք 'ի ծովու և 'ի գազանաց։ Զինչ 'ի ծովէն զերծաք, 15 անձինք էաք. 5 Հայոց ազգ էաք որպէս 'ի վերոյ յանուանէ գրեալ եմ. և հնգեքեանքս ևս ապրեցաք անվնաս թէ 'ի ծովու և թէ 'ի ձեռաց գազանաց։ Այլ 'ի մնացեալ ընկերացն մերոց, 'ի մէջ Հանկալին երեք թուրք և երկու ֆռանկ չար գազանն տարաւ. և մին ֆռանկ մեռաւ. իսկ այլ մնացեալքս 15 մարդկանց, ինն անձինք ազատեցաք վերջապէս թէ մեք և թէ նոքա։ Սուրբ մեռանն որ գտաք, ընդ մեզ եղեալ թուրքերն և ֆռանկքն ևս տեսին և վկայեն մինչև ցայսօր. բայց մեզ ոչ է փոյթ վասն նոցին վկայութեանն։ Սակայն և վերջապէս զայս ամենայն բանքս և պատմութիւնս՝ առաջի ամենամեծին Աստուծոյ Հշմարտութեամբ գրեալ ծանուցի սրբազանի Տեառնդ իմոյ. և բազում բանք զանց արարեալ թողի յաղագս երկարութեանն զի մի ձանձրութիւն երևիցի Տեառնդ, և կամ այլոց ընթերցողաց և ունկնդրողաց. զի 'ի տեղս բարեպաշտօնք ոմանք բազում անգամ խնդրեցին 'ի մէնջ զի զամենայն անցսն մեր գրել որպէս զպատմութիւն, և տալ իւրեանց իբր նորալուր բան. իսկ մեք ոչ յանձն առանք. այլ այժմ հարկն ստիպեաց, զոր պարտ էր զամենայն որպիսութիւնս և անցսն մեր գրով ծանուցանել գերապատիւ Տեառնդ իմոյ։

Գրեցաւ Ձեռամբ իմով 'ի յերկիրս Հնդկաց 'ի Բանկալայ գաւառին 'ի Սէյտապատ կոչեցեալ քաղաքն. 'ի թուականիս մերոյ ՌՄԺԲ (1763). և 'ի յունվար ամսեանն 15՝ յօրն սուրբ Սարգսի պասի չորեքշաբաթին։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուդովիկոս ԺԶ-ին վարքն ու մահը [1]։

Արբոր քնէն կ'արթննար՝ նորէն իր զբաղանացը ձեռք կը զարնէր. ու ես քովը նստած աչքին առջև գեղագրութեան [2] դաս կու տայի որդւոյն. և որպէս զի աւելի օգտակար ըլլայ՝ Ամենաթեաքիէոյի և ուրիշ երևելի հեղինակաց գրուածոց մէջէն աղէկ կտորները օրինակել կու տայի։ Դասը լմննալէն վերջը իշխանին հետ Աղիսաբեթ խաթունին խուցը կ'երթայի, ուր գնարիկ և կամ ուրիշ խաղ մը կը խաղայի հետը։ Իրիկուան դէմ թագաւորական ընտանիքը սեղանատախտակի մը չորս կողմը նստած՝ մինչև ժամը 8 ուշ կը դնէին պատմական և կամ ուրիշ զուարճացուցիչ կամ կրթական գրքի մը ընթերցմանը՝ զորն որ բարձր ձայնով կը կարդար թագուհին, և որուն փոխն 'ի փոխ կ'օգնէր Աղիսաբեթ խաթունը. բայց շատ անգամ կ'ըլլար՝ որ իրենց թշուառ վիճակին յարմար գալով ընթերցմանն նիւթը՝ տխրութեամբ կը լեցընէր խեղճ Հերուն սիրտը. ետքը Աղիսաբեթ խա-

1 Տես. Հա. ԺԳ, երես 329. Հա. ԺԴ, եր. 170, 240, 320, 368. ԺԵ, 7։

2 Գղ. Calligraphie.